ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2024թվականի N 1327-Ա

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԻՆՅԱՆ ԱՁ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետով, հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզի Փամբակի համայանքապետարանի և Վարդան Մատինյան ԱՁ-ի միջև 2022 թվականի հունիսի 22-ին կնքված ԼՄՓՀ-ԳՀԱՇՁԲ-22/08 ծածկագրով կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագրը, այն հանգամանքը, որ կապալառուի կողմից աշխատանքը կատարել է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դարձել է ակնհատ անհնար, խախտելով պայմանագրով նախատեսված գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ ***որոշում եմ.***

1. Վարդան Մատինյան ԱՁ-ին (ՀՎՀՀ՝ 66998467, հասցե՝ Լոռու մարզ, ք. Վանաձոր Զորավար Անդրանիկի 57) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն որոշման օրինակն ուղարկել Մասնակցին և ՀՀ ֆինանսների նախարարություն:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի գնումների մասնագետի վրա:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

06 նոյեմբերի 2024
գ. Փամբակ